

**«2017Թ. ԳՅ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ
VI ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ**

«2017թ. ԳՅ Լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 8-րդ մրցաշրջանի 6-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 3 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերի ճիշտ պատասխանի դեպքում մասնակիցը կստանա ընդհանուր հաշվով 30 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 40 միավոր:

Վեցերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից, ինչպես նաև I-VI փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Վեցերորդ փուլին ներկայացված հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2018թ. հունվարի 28-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում 2018թ. հունվարի 29-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2018 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

**«2017Թ. ԳՅ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ
ՄՐՑՈՒՅԹԻ VI ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ**

1. ԱԱՀ վճարող կազմակերպությունը օֆշորային երկրում գրանցված կազմակերպությանը 10.01.2017թ. տրամադրել է հիմնական միջոցների ձեռքբերման մասով կանխավճար՝ 50 հազ. ԱՄՆ դոլար, որի մասով ապրանքներ չեն մատակարարվել:

Արդյոք առկա՞ է 2017թ.-ին շահութահարկով հարկման անհրաժեշտություն՝

ա) այո.

բ) ոչ:

2. Հարկման ընդհանուր դաշտում գործող կազմակերպությունը իրացրել է 100 մլն. դրամ կադաստրային արժեքով հաշվառվող հասարակական նշանակության տարածք: Հատուցման զինը կազմել է 100 մլն. դրամ:

Որոշել տվյալ գործարքի մասով շահութահարկից նվազեցվող գումարի չափը, եթե տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը ևս եղել է 100 մլն. դրամ՝

ա) 100 մլն.

բ) 116,67 մլն.

գ) 80 մլն.

դ) բոլոր պատասխանները սխալ են:

3. Եկամտային հարկով աշխատող ԱԶ-ն իրականացրել է անհատույց սպառում: Արդյոք կարո՞ղ են կիրառվել «Ավելացված արժեքի հարկի մասին» մասին ՀՀ օրենքով նախատեսված հարկման օբյեկտի փոփոխության դրույթները/ հոդված 8.6/

ա) այո.

բ) ոչ:

4. ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի համաձայն՝ ձեռքբերման ժամանակ ստացված առևտրային զեղչերը և գների այլ իջեցումները՝

ա) ներառվում են ձեռք բերման ծախսումների մեջ.

բ) ձեռքբերման ծախսումները որոշելիս հանվում են.

գ) դիտարկվում են որպես գործառնական այլ եկամուտ:

5. ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի համաձայն՝ արտադրական կազմակերպությունում նշվածներից ո՞րը չի համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝

ա) ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը.

բ) այլ կազմակերպության բաժնետոմսերի վաճառքը.

գ) ստացված փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը:

6. ՀՀՄՍ 10 «Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր» ստանդարտի համաձայն՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերը այն դեպքերն են, որոնք՝

ա) տեղի են ունեցել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո և հավանական է, որ արդյունքում կազմակերպությունը կունենա միայն տնտեսական օգուտների ներհոսք.

բ) ցույց են տալիս հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո առաջացած պայմանները (հրավիճակը).

գ) տեղի են ունեցել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո և հավանական է, որ արդյունքում կազմակերպությունը կունենա միայն տնտեսական օգուտների արտահոսք.

դ) հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմանները (հրավիճակը):

7. ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով շահութահարկի գծով ճանաչման ենթակա ծախսը (եկամուտը) հավասար է (եթե անտեսենք սեփական կապիտալում ճանաչված, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերումից առաջացող գումարները)՝

ա) այդ ժամանակաշրջանի արդյունքներով բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին.

բ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.

զ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ.

դ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդների փոփոխություններով:

8. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով հաշվարկած տույժերի ու տուգանքների արտացոլում՝

ա) Դեբետ 331
Կրեդիտ 525 .

բ) Դեբետ 714
Կրեդիտ 525.

գ) Դեբետ 342
Կրեդիտ 525 :

9. Արտացոլվում է շահութահարկի հաշվարկման նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրսգրումը՝

ա) Դեբետ 521
Կրեդիտ 614 .

բ) Դեբետ 521
Կրեդիտ 331.

գ) Դեբետ 942:

10. Կազմակերպության վարչական նշանակության շենքի կառուցման համար ծախսված նյութերի արտացոլում՝

ա) Դեբետ 118
Կրեդիտ 211.

բ) Դեբետ 821
Կրեդիտ 211.

գ) Դեբետ 713
Կրեդիտ 211:

Կիրառվում է 2016թ. հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար

Հավելված N1

Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2011 թվականի օգոստոսի 16-ի N 2034 –Ն հրամանի

Ձև

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ

1. Փաստաթղթի հերթական համարը								_____													
								(լրացվում է հարկային մարմնի կողմից)													
2. Հարկ վճարողի հաշվառման համարը								3. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը													
4. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը																					
5. Գտնվելու վայրը																					
6. Հաշվետու ժամանակաշրջանը								Տարի	2	0	1	6	Ամիս					Եռամսյակ			1
7. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը																					
(դրամ)																					
ԱԱՀ-ի կրեդիտ												[Ա].			[Բ].						
												Շրջանառությունը			ԱԱՀ կրեդիտ						
8. ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող) գործարքներ, այդ թվում՝															X						
8.1 Օրենքի հոդվածի համարը						8.2 Հոդվածի կետի համարը						X			X						
															X						
															X						
9. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքներ															X						
10. Հաստատագրված և(կամ) արտոնագրային վճարով հարկվող գործունեությունից															X						

11. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքներ	18 500 000	3 700 000
11.1. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքներ		
12. ԱԱՀ-ի 16.67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող	9600000	160032
13.ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն	X	1135069
13.1. Մատակարարի անունից դուրս գրված ճշգրտվող հարկային հաշիվներով գործարքներ	X	
14. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ		
[Ա]=[8.Ա]+ [9.Ա] + [10.Ա] + [11.Ա] - [11.1.Ա]+ ([12.Ա] - [12.Բ])	19 299 968	4 995 101
[Բ]=[11.Բ] - [11.1.Բ] + [12. Բ] + [13. Բ] - [13.1.Բ]		
ԱԱՀ-ի դեբետ		
	[Ա]. Արժեք	[Բ].ԱԱՀ դեբետ
15. ՀՀ տարածք ներմուծված ապրանքների	29 526 396	5 905 279
16. ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների	3 000 000	600 000
16.1. Ձեռք բերված ապրանքների մասով դեբետի հետաձգում (գումարը)	X	
16.2 Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ (նշվում է ճշգրտման հիմքը, պատճառը)	[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
	1 125 000	
8.4	1 125 000	
16.3. Ձեռքբերումներին վերաբերվող ճշգրտող հարկային հաշիվներով գործարքներ		
17. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ([15.Բ] + [16.Բ] - [16.1.Բ] + [16.2.Ա] - [16.2.Բ] - [16.3.Բ])	[Ա]. դրական	[Բ]. բացասական
Եթե գործողության արդյունքը՝		
- հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»	7 630 279	
- դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը,		
- բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը		
18. Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար	[Ա]. Շրջանառությունը	[Բ]. Հաշվարկված ԱԱՀ գումարը

<p>19. Տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ</p> <ul style="list-style-type: none"> - եթե լրացված է [17.Ա] վանդակը՝ ապա ([14.Բ] - [17.Ա]), - եթե լրացված է [17.Բ] վանդակը՝ ապա ([14. Բ] + [17.Բ]): <p>Եթե նշված գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»</p>	<p>[Ա]. Ենթակա է բյուջե վճարման (կրեդիտ)</p>	<p>[Բ]. Ենթակա է հաշվանցման (դեբետ)</p>
		2 635 178

Կազմակերպության տնօրեն

(անհատ ձեռնարկատեր)

ստորագրությունը, անունը, ազգանունը

Հաշվապահ

ստորագրությունը, անունը, ազգանունը